

պէս, ինչպէս նաեւ քիչ շատ մտաւոր դար-
գացում ունեցողներ մասնաւոր պաշտում
մը ունէին Փրանսական զրահանութեան
հանդէպ:

Դասականներէն ժամանակակիցները .
Դէնը փափկազգած փիլիսոփան, Զօլան
համակրելի իրապաշար, Մօրատան խոս-
ված հոգիով, Բ. Պուրժէն կնոջական հո-
գեբանութեան նրբազգած թարգմանը,
Պօտլէսը ալեկոծ, չարին ծաղիկներով բեռ-
նաւոր, Սամէնը ոսկի տաւիղով եւ մա-
նաւանդ ալեհեր Վերլէնը, որուն տաղերը
երաժշտութիւն են անմոռանալի, «Իմաս-
տութեան» քերթողը, որ զիտէ սիրել ու
արտասուել յորդարուիս:

«Ամենէն սուրն է ցաւի
Անգիտանալ թէ ինչո՞ւ
Առանց սիրոյ կամ դաւի
Հոգիս այսքան կը ցաւի»:

(Արդարեւ Սիւլլի աննման թարգմանող
մը եղած է):

Իսկ այս ամէնուն տիրապետող, մեր ըզ-
դայնութեան ուղղակի ազդող, ու թերեւս
մեր ոսմանքի հոգիները թախիծի մշու-
շին մէջ յաւերժապէս ընկղմողը եղած է
մեծ Ուղեւորը, մեծ Երազողը, Լօթին:
Անոր մշտատանջ երեւակայութեան հետ
զացած ենք բախելու Իսլանտայի սեւ խու-
թերուն, կամ աւաղներուն մէջ «Անապա-
տ»ին փնտնելու սառնորակ ջրհոր մը ար-
մաւենիներու տակ կամ Սպահանի վար-
դերով խնկուած աւերակներուն վրայ թա-
ռելու կամ խոխլու մահուան վեհապանծ
անդորրութեանը վրայ Ֆիլէին, խորհուր-
դով ու լուծեամբ պարուրուած Ֆիլէին:

Եւ ապրած, չնչած, սիրած, տառապած
ենք անոր ամէն հերոսներուն հետ, եւ մեր
երիտասարդութեան վրայ անջնջելի մնա-
ցած է տպաւորութիւնը ամէն մէկ հա-
տորին:

Թերեւս նուազ զգայուն, նուազ տառա-
պալին, նուազ երազատենչ սերունդ մը ըլ-
լայինք մենք, առանց այդ օտար թէեւ ըզ-
մայլելի ներգործութեան:

Մեզմէ վերջը եկող սերունդները երբեք
չտրտի ենթարկուին այդպիսի հոգին տան-
ջող, բայց աստուածային ազդեցութեան:
Այլ է անոնց պաշտամունքին առարկան:
ԱՆԱՅԻՍ

ՕՏԱՐ ԱԵՁՈՒ

Ձեն թարգմանուի երբեք սրտերն,
Ուրիշ է սէրն ամէն ազգի.
Թէպէտ նրման են ալիքներ
Բայց ամէն ծով իր ամին ունի:

Դուք չէք կրնար սիրտս ամոքել
Եւ ոչ կարգալ անոր մատեն.
Ձէք կրնար իմ լոյսը վառել
Ձեր արեւով օտարական:

Ես այն հոգէն հոգի առի,
Ուր զըրախտի վարդեր բուսան.
Այն արեւով աչքերս բացի,
Որ կ'ընկերէր արարչութեան:

Ուրիշ են մեր երկնի աստղերն,
Աչքերն ինչպէս մեր հարսերուն.
Անթառամ են մեր ծաղիկներն
Եւ չէք զլտեր անոնց անունն:

Մեր ամէն տենչ իր երզն ունի
Եւ ամէն վիշտ լարն իր լալու.
Օտար են ձեր խոսքերն ինձի
Աչքեր չունիք զիս յուզելու:

Կը նայիմ ձեզ եւ վերստին
Կը մոռնամ ձեր դէմքն ու հոգին.
Դուք չէք հասնիր իմ դադանքին,
Եւ ոչ ունիք իր բանալին:

Սիրտս անձաւ մ'է խորհրդաւոր
Ինչպէս մըթին մեր տաճարներ.
Չունիք դուք մեր աղօթքի բոյր
Մեր շարականն ու մեր սուրբերն:

Ուրիշ է մեր հովերու ձայնն
Մեր լեռներուն բուքն ահարկու.
Ո՛հ, չես կրնար ըլլալ թարգման
Մեր սրտերուն, օտար լեզու:

Պուրկուրէք, 9-2-1943

Հ. Վ. Յ.

ԻՏԱԼԻՈՅ ՆՈՐԱՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ

ԼՈՒԻՒՋԻ ԷԻՆԱՄՈՒՏԻ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՄԷՋ

Ս. Ղազար, հայկական վանք ու օրորան
Հայ Աշակոյթի:

Ամառնային այս շրջանին Քաղաքս ժա-
մանող զանազան բարձրատախճան անձնաւո-
րութիւններ, իտալացի կամ ուրիշ ազգերէ՝
իրենց ցանկալի այցելավայրերէն մէկը կը
համարին միշտ Ս. Ղազարը:

Յունիս 7, երկուշաբթի, երեկոյեան ժամը
6-ին Ս. Ղազարու հողին վրայ կը կոխէր
նաեւ Իտալիոյ Հասարակապետութեան նոր-
ընտիր Նախագահը, որ երկու օրուան հա-
մար եկած էր Վենետիկ Վեդարուեստի
«Երկամեայ Յուցահանգէսին» բացումը
կատարելու. այնուհանդերձ փափաքած էր
անպատճառ այցելել Միթիթարեան Հայրե-
րուն:

Երբ որոշուած ժամուն կը հասնէին երկու
շոգեմակոյցներ, բերելով Վիսեմ. նախագահը
իր շքովիր խումբովը, Միթիթարեան վար-
դապետները փութացին վա-
ղել ընդառաջ: Յետ առաջին
յարգանքի աղջկան մատու-
ցանելու, բարձրատախճան
Հիւրը առաջնորդուեցաւ ե-
կեղեցին, ուր պատարա-
տուած էին երկու աղօթա-
բաններ Իրեն եւ իր շնոր-
հափայլ կնոջ Իտալին: Ա-
ւանդատան մէջ ցուցա-
դրուած էին հայկական եկե-
ղեցւոյ սրբազան սպասները,
շուրջառ, եմփօրոն, սաղա-
ւարտ, սարկաւազի շապիկ-
ներ, ոսկեայ եւ արծաթեայ
բանաւածքներով, նմոյշներ
հայ սրբազան արուեստի,
զոր հիացումով դիտեցին:



Վիսեմ. Նախագահը կ'առաջնորդուի դէպի եկեղեցին

